Արձանագրություն N 3
ՋԿ-ԳՀԾՁԲ-24/2-Փ ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 22 մարտի 2024թ.

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Է. Բաղալյանը
Հանձնաժողովի անդամներ՝ Ս. Ասրյանը, Ն. Ավետյանը, Լ. Գալֆայանը և Ս. Աբազյանը
Քարտուղար՝ Ս. Գալստյան:

Մասնակից ընկերությունների կողմից ներկայացված շտկման փաստաթղթերի ուսումնասիրության վերաբերյալ

Ջրային կոմիտեի կարիքների համար Ողոգման համակարգերում վերականգնման (կառուցման) աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի պարզ փորձաքննության իրականացման ծառայությունների ձեռքբերման ՋԿ-ԳՀԾՁԲ-24/2-Փ ծածկագրով ընթացակարգի մասնակից «Ջրարբի» ՍՊԸ-ն՝ սահմանված ժամկետում ներկայացրել է գնահատող հանձնաժողովի 19.03.2024թ. թիվ 2 որոշմամբ արձանագրված անհամապատասխանությունների շտկման վերաբերյալ փաստաթղթերը: Ներկայացված փաստաթղթերով մասնակից «Ջրարբի» ՍՊԸ-ն շտկել է արձանագրված անհամապատասխանությունները:

Հանձնաժողովի որոշումը

ՋԿ-ԳՀԾՁԲ-24/2-Փ ծածկագրով ընթացակարգի մասնակիցների հայտերով ներկայացված (այդ թվում շտկմամբ) փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում գնահատող հանձնաժողովը որոշեց.

1. ՋԿ-ԳՀԾՁԲ-24/2-Փ ծածկագրով ընթացակարգի ընտրված մասնակից հայտարարել «Ջրարբի» ՍՊԸ-ին:
2. Հրապարակել հայտարարություն պայմանագիր կնքելու որոշման մասին:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ ՋԿ-ԳՀԾՁԲ-24/2-Փ ծածկագրով ընթացակարգի համար անգործության ժամկետ է սահմանվում պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարությունը հրապարակելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

3. Անգործության ժամկետը լրանալուն հաջորդող չորրորդ աշխատանքային օրը ծանուցել ՋԿ-ԳՀԾՁԲ-24/2-Փ ծածկագրով ընթացակարգի ընտրված մասնակից «Ջրարբի» ՍՊԸ-ին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը:

Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին:

Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստ հրավիրել ըստ անհրաժեշտության, որը տեղի կունենա Ջրային կոմիտեի վարչական շենքում, հասցեն՝ ք. Երևան, Վարդանանց 13ա:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0

Գնահատող հանձնաժողովի՝

Նախագահ	_____	Է. Բաղալյան
անդամներ	_____	Ս. Ասրյան
	_____	Ն. Ավետյան
	_____	Լ. Գալֆայան
	_____	Ս. Աբազյան
Քարտուղար	_____	Ս. Գալստյան